



**«ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻՆ  
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐԿՈՂ ՀՈՂՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) կողմից պարբերաբար նախապատրաստվում է ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակվող «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» խորագիրը կրող հոդվածների ժողովածուն, որտեղ տեղ են գտնում ուսանողների, ասպիրանտների, հայցորդների և երիտասարդ գիտնականների գիտական հոդվածներ:

«ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ին հոդված կարող է ներկայացնել ՀՀ բուհերից կամ գիտահետազոտական կենտրոններից որևէ մեկում սովորող կամ աշխատող մինչև 35 տարեկան անհատը: Ներկայացված գիտական հոդվածն իր բովանդակությամբ պետք է արտացոլի հեղինակ(ներ)ի կողմից ինքնուրույն աշխատանքի արդյունքները և պարունակի գիտականորեն ընդունված ձևակերպումներ:

Հոդվածի համակարգչային շարվածքը՝ Word-97-2007 ծրագրով: Ծավալը՝ 3 ամբողջական էջից մինչև 7 էջ:  
Տեքստի տառատեսակը՝ ըստ KDWin-ի. հայերեն՝ Armenian Phonetic Unicode, ռուսերեն՝ Russian Phonetic Unicode, անգլերեն՝ US:

Առաջին էջի վերին տողի աջ մասում 10 pt տառաչափով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև՝ տողի աջ մասում, 10 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, կարգավիճակը (բակալավր, մագիստրանտ, ասպիրանտ): Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Գիտական ղեկավար» արտահայտությունը, այնուհետև բութ դնելով գրվում են գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անունն ու ազգանունը: Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Էլ. փոստ» արտահայտությունը, այնուհետև բութ դնելով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով (մեծատառերով), թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի հիմնական տեքստը:

Հիմնական տեքստի տառաչափը՝ 10 pt, տողերի հեռավորությունը՝ 1, էջի ֆորմատը՝ A4 (210 x 297 մմ), լուսանցքները. ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 15 մմ, ներքևից՝ 20 մմ: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Գրաֆիկներ օգտագործելիս անհրաժեշտ է կիրառել տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք հոդվածի տպագրական էջադրման ժամանակ կբացառեն գրաֆիկի՝ հնարավոր աղավաղումները:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում (բնական և տեխնիկական գիտությունների պարագայում՝ հոդվածի բուն տեքստից հետո՝ «Գրականություն» վերտառությամբ)՝ 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, օգտագործած ինֆորմացիայի էջը (բնական գիտությունների պարագայում՝ հոդվածի աշխատանքի էջերի ընդհանուր թիվը):

Հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են. հոդվածի տեքստից մեկ տող հետո 10 pt տառաչափով տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) հայերենով գրվում է հոդվածի վերնագիրը: Հաջորդ տողի կենտրոնում գրվում է «Բանալի բառեր» արտահայտությունը, և տրվում են բանալի բառերը՝ բառեր կամ բառակապակցություններ (հասկացություններ, առանցքային բառեր կամ արտահայտություններ), որոնք հնարավորինս ամբողջականորեն և յուրահատուկ կերպով բնորոշում են գիտական հոդվածի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը: Այնուհետև մեկ տող թողնելով՝ 50-60 բառի սահմաններում համառոտ ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (հիմնական էությունը՝ նպատակը, խնդիրները, արդյունքը/եզրակացությունը):

Հայերեն ամփոփագրի օրինակով պարտադիր է նաև ռուսերեն և անգլերեն ամփոփագրերի ներկայացումը՝ համապատասխան բանալի բառերով: Օտարալեզու հոդվածն ինչպես հայերեն ամփոփագիրը պարտադիր է:

Հոդվածն անհրաժեշտ է տպագիր և էլեկտրոնային տարբերակներով ներկայացնել ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահին կամ ԵՊՀ ՈՒԳԸ կենտրոնական գրասենյակ (Ա. Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ, 608 սենյակ) կամ էլ ուղարկել ՈՒԳԸ էլեկտրոնային փոստի հասցեին՝ [sss@ysu.am](mailto:sss@ysu.am):

Հոդվածին պարտադիր պետք է կցված լինեն գիտական ղեկավարի կարծիքը և համապատասխան ամբիոնի վարիչի կամ գիտական կենտրոնի կողմից տրված երաշխավորագիրը: Եթե հոդվածը ներկայացվում է էլեկտրոնային փոստով, ապա անհրաժեշտ է ուղարկել նաև երաշխավորագրի սքանավորված տարբերակը:

*Վերը նշված չափորոշիչներին չհամապատասխանող հոդվածները չեն տպագրվելու:*